## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 1

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաշվիչ հանձնաժողովի նիստի

### *«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

ք. Երևան 15 մարտի 2019թ.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ /այսուհետ՝ բանկ/ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի քվեարկությունը կատարվել է քվեաթերթիկներով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 79): Քվեաթերթիկները, համաձայն բանկի Խորհրդի թիվ 4/05-05.02.19թ. որոշման, տրամադրվել /առաքվել/ են բաժնետերերին մինչև ս.թ. փետրվարի 13-ը: Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հաշվի են առնվել ժողովի անցկացման օրվա դրությամբ վերադարձված քվեաթերթիկներով տրամադրված ձայները:

Քվեաթերթիկների ամփոփման արդյունքները հետևյալն են`

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 1,852,533 ձայնի իրավունք տվող բաժնետոմս, որից քվեարկությանը մասնակցել են 1,381,798 ձայնի իրավունք տվող բաժնետոմս կամ բաժնետոմսերի ընդհանուր թվաքանակի 74.59%-ը:

Քվորումը ապահովված է:

Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի քվեարկությանն էին դրված հետևյալ հարցերը`

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:
2. Բանկի արտոնյալ բաժնետոմսերի թողարկման բաժանորդագրության արդյունքներով բանկի կանոնադրական կապիտալը 25,635,343,200 ՀՀ դրամ հաստատելու մասին:
3. Բանկի Կանոնադրության փոփոխված տարբերակի վերաբերյալ:

Քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները, ըստ օրակարգի հարցի, բաշխվել են հետևյալ կերպ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. Առաջին հարց | կողմ | 1,381,798 | ձայն կամ մասնակիցների ձայների | 100.0% |
| | դեմ | 0 | ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| | ձեռնպահ | 0 | ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| | անվավեր | 0 | ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| 2. Երկրորդ հարց | կողմ | 1,381,798 | ձայն կամ մասնակիցների ձայների | 100.0% |
| | դեմ | 0 | ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| | ձեռնպահ | 0 | ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| | անվավեր | 0 | ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| 3. Երրորդ հարց | կողմ | 1,381,798 | ձայն կամ մասնակիցների ձայների | 100.0% |
| | դեմ | 0 | ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| | ձեռնպահ | 0 | ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| | անվավեր | 0 | ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Հաստատել բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովը մեկ տարվա լիազորությունների ժամկետով, հետևյալ կազմով.
Նախագահ` Ա. Խաչատրյան
Անդամներ` Գ. Խաչատրյան, Ե. Ալեքսանյան

2. Հաստատել բանկի արտոնյալ բաժնետոմսերի թողարկման բաժանորդագրության արդյունքներով բանկի կանոնադրական կապիտալը 25,635,343,200 ՀՀ դրամ:

3. Հաստատել բանկի Կանոնադրության լրամշակված տարբերակը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողով.

| | |
|---|---|
| նախագահ` | Ա. Խաչատրյան |
| անդամներ` | Գ. Խաչատրյան |
| | Ե. Ալեքսանյան |